# ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ՝ ԼՂՀ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ

Սեպտեմբերի 1-ին կայացած ԼՂՀ նախագահական արտահերթ ընտրություններում, պաշտոնական նախնական տվյալների համաձայն, գրանցված ընտրողների 89,3%-ը քվեարկել է Արկադի Ղուկասյանի օգտին, ձայների 5,3%-ը հավաքել է պատգամավոր Բորիս Առուշանյանը, Արթուր Թովմասյանի օգտին է քվեարկել ընտրողների 5,35%-ը: Այս մասին հայտարարել է ԼՂՀ ԿԸՀ-ն:

Ինչպես հայտնի է, ընտրությունների ընթացքին, քվեարկության եւ քվեների հաշվման արարողակարգին հետեւում էին մոտ 40 միջազգային դիտորդներ, որոնց թվում նաեւ Հայաստանի խոշորագույն քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Սեպտեմբերի 2-ին նրանք ստորագրել են ակտ ԼՂՀ արտահերթ նախագահական ընտրությունների արդյունքների մասին, ուր փաստում են, որ ընտրությունները կայացել են նախագահի ընտրության մասին ԼՂՀ օրենքին համապատասխան եւ խախտումներ չեն արձանագրվել:

Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Ռենե Ռուկեն «Նոյյան տապան» գործակալության թղթակցի հետ զրույցի ժամանակ նշել է, որ այս տարի ընտրություններն ավելի կազմակերպված էին: «Տեղի ունեցան ազատ, ժողովրդավարական ընտրություններ: Լեռնային Ղարաբաղի օրինակով ամբողջ աշխարհը կարող է սովորել, թե ինչպես է հարկավոր կազմակերպել եւ անցկացնել ընտրությունները»,- հայտարարեց պրն. Ռուկեն: Այդ նույն կարծիքը հայտնեց նաեւ ՀՀ-ում ՌԴ նախկին դեսպան Վլադիմիր Ստուպիշինը: Նա հայտարարեց, որ խախտումներ չեն եղել, ընտրական հանձնաժողովներն աշխատում էին գրագետ եւ օրենքին համապատասխան:

Պրն. Ստուպիշինը, նշելով սահմանում տեղի ունեցած ողբերգական դեպքը, երբ ադրբեջանցի նշանառուի կրակոցից սպանվել է ղարաբաղյան բանակի մի սպա, հայտարարեց. «Արցախի ոսոխները չեն կարողանա խանգարել Ղարաբաղի ժողովրդին ինքնուրույն որոշելու սեփական բախտը եւ այս ընտրությունները դրա լավագույն ապացույցն են»:

Ն Տ